



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՁԵԿՈՒՅՑ

*Ընդունելիության նոր չափանիշը Կոնվենցիայի
35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի
համաձայն. նախադեպային իրավունքի
սկզբունքները երկու տարի շարունակ*

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

Հրատարակիչները կամ կազմակերպությունները, որոնք ցանկանում են վերարտադրել այս զեկույցը (կամ դրա թարգմանությունը) տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով, կարող են դիմել publishing@echr.coe.int էլ. հասցեով՝ հետագա ցուցումներ ստանալու նպատակով:

© Եվրոպայի խորհուրդ/Մարդու իրավունքների եվրոպական դատարան, 2012

Զեկույցը պատրաստվել է Հետազոտությունների բաժնի կողմից և որևէ կերպ չի պարտավորեցնում Դատարանին: Այն ընդգրկում է նախադեպային իրավունքը (Դատարանի կողմից արդեն քննված կամ ընթացքի մեջ գտնվող գործերը) մինչև 2012թ. հունիս ամիս: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:

Սույն զեկույցը հնարավոր է ներբեռնել՝ www.echr.coe.int (Նախադեպային իրավունք – Նախադեպային իրավունքի վերլուծություն – Հետազոտության զեկույցներ):

ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇԸ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 35-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ԿԵՏԻ «Բ» ԵՆԹԱԿԵՏԻ ՀԱՄԱՁԱՅՆ.

ՆԱԽԱԴԵՊԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՐԿՈՒ ՏԱՐԻ ՇԱՐՈՒՆԱԿ

I. Ներածություն

1. Սույն ակնարկի նպատակն է սահմանել նախադեպային իրավունքի սկզբունքները 35-րդ հողվածի 3-րդ կետի «բ» ենթակետով սահմանված ընդունելիության նոր չափանիշի համար, որը Դատարանը զարգացրել է այն գործողության մեջ դնելու առաջին երկու տարիների ընթացքում: Հարկ է նշել, որ այդ չափանիշի կիրառումը 2010 թվականի հունիսի 1-ից մինչև 2012 թվականի մայիսի 31-ը վերապահված էր բացառապես Պալատների և Մեծ պալատի¹ իրավասությանը: Թիվ 14 Արձանագրության 20-րդ հողվածի համաձայն՝ նոր դրույթը սկսեց կիրառվել Դատարանի վարույթում գտնվող բոլոր գանգատների նկատմամբ, բացառությամբ այն գանգատների, որոնք ընդունելի էին հայտարարվել:

35-րդ հողվածի 3-րդ կետի «բ» ենթակետը սահմանում է.

«Դատարանն անընդունելի է համարում 34-րդ հողվածին համապատասխան ներկայացված ցանկացած անհատական գանգատ, եթե գտնում է, որ

...

բ. դիմողը չի կրել էական վնաս, եթե Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված մարդու իրավունքների պաշտպանությունը չի պահանջում գանգատի ըստ էության քննություն, և պայմանով, որ ոչ մի գանգատ չի կարող մերժվել այս հիմքով, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատական ատյանների կողմից:»

2. Սակայն, այստեղ անհրաժեշտ է նշել, որ նոր չափանիշի ձևակերպումը հավանաբար շուտով փոփոխության է ենթարկվելու, հաշվի առնելով Բարձր պայմանավորվող կողմերի կողմից Բրայթոնի հռչակագրում արտահայտված ցանկությունը (20 ապրիլ 2012թ.).

«15. գ. Ամփոփում է, որ Կոնվենցիայի 35-րդ հողվածի 3-րդ կետի «բ» ենթակետը պետք է փոփոխության ենթարկվի, որից պետք է հեռացվեն «և պայմանով, որ ոչ մի գանգատ չի կարող մերժվել այս հիմքով, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատական ատյանների կողմից» բառերը, և հրավիրում է Նախարարների կոմիտեին մինչև 2013 թվականի վերջ ընդունել համապատասխան փոփոխություն կատարող փաստաթուղթ:»

3. Տարածված տեսակետ է, որ նոր չափանիշում տեղ գտած եզրույթները բաց են մեկնաբանության համար, ինչն արդեն իսկ գործող ընդունելիության չափանիշների² հետ

¹ Թիվ 14 Արձանագրության 20-րդ հողվածի 2-րդ կետ:

² Տե՛ս թիվ 14 Արձանագրության [Բացատրական Ձեկույցը \(CETS No. 194\)](#), §§ 78 և 80:

Դատարանին որոշակի ճկունության հնարավորություն է տալիս: Կոնվենցիայում օգտագործված շատ եզրույթների նման՝ այս եզրույթները նույնպես ենթակա չեն սպառնիչ սահմանման: Ուստի, Բարձր պայմանավորվող կողմերը ակնկալում են, որ Դատարանը՝ նախադեպային իրավունքի աստիճանաբար զարգացման ճանապարհով կգտնի օբյեկտիվ չափանիշ նոր կանոնի կիրառման համար:³

II. Ընդունելիության նոր չափանիշի նպատակը

4. Ընդունելիության նոր չափանիշի նպատակն է հնարավորություն տալ Դատարանին ավելի արագ քննել անհիմն գործերը, և հետևաբար՝ Դատարանին թույլատրել եվրոպական մակարդակում⁴ կենտրոնանալ մարդու իրավունքների օրինական պաշտպանության իր գլխավոր առաքելության իրագործման վրա: Բարձր պայմանավորվող կողմերը դրանով իսկ մտադրություն են ունեցել Դատարանին ավելի երկար ժամանակ տրամադրել ըստ էության քննության ենթակա գործերի ուսումնասիրության համար՝ ելնելով թե՛ անհատ դիմումատուի իրավական շահերից կամ թե՛ Կոնվենցիայի և եվրոպական հասարակական կարգի ավելի լայն տեսանկյունից, որին և Դատարանը նպաստում է:⁵

5. 2010 թվականին, Բարձր պայմանավորվող կողմերը խնդրեցին Դատարանին լիարժեք գործողության մեջ դնել ընդունելիության նոր չափանիշը և ուսումնասիրել *de minimis non curat praetor*⁶ սկզբունքը կիրառելու այլ հնարավորությունները: Այնուհետ, 2011 թվականին Դատարանին խնդրեցին «լիարժեք գործողության մեջ դնել ընդունելիության նոր չափանիշը՝ *de minimis principle* սկզբունքի համաձայն»:⁷

III. Ընթացակարգը

6. Դատարանը կարող է իր սեփական նախաձեռնությամբ կիրառել ընդունելիության նոր չափանիշը (*Adrian Mihai Ionescu-ն ընդդեմ Ռուսիայի* (որոշ.), թիվ 36659/04, § 35, 1 հունիս 2010թ.) կամ ի պատասխան Կառավարության կողմից բարձրացված առարկության (*Gaglione և այլք ընդդեմ Իտալիայի*, թիվ/թիվ 45867/07 և մյուս գործերը, 21 դեկտեմբեր 2010թ.): Որոշ գործերով Դատարանը անդրադառնում է ընդունելիության նոր չափանիշին մինչև այլ ընդունելիության պահանջներին ապավինելը (*Korolev-ն ընդդեմ Ռուսաստանի* (որոշ.), թիվ 25551/05, ՄԻԵԴ 2010, *Rinck-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշ.), թիվ 18774/09, 19 հոկտեմբեր 2011թ., *Gaftoniuc-ն ընդդեմ Ռուսիայի* (որոշ.), թիվ 30934/05, 22 փետրվար 2011թ., *Burov-ն ընդդեմ Մոլդովայի* (որոշ.), թիվ 38875/03, 14 հունիս 2011թ., և *Shefer-ն ընդդեմ Ռուսաստանի* (որոշ.), թիվ 45175/04, 13 մարտ 2012թ.): Այլ գործերով, Դատարանը անդրադառնում է ընդունելիության նոր չափանիշին, երբ բացառում է մյուս չափանիշները (տե՛ս *Adrian Mihai Ionescu-ի* գործը, վերևում մեջբերված, և *Holub-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշ.), թիվ 24880/05, 14 դեկտեմբեր 2010թ.): *Munier-ն ընդդեմ Ֆրանսիայի* գործով ((որոշ.), թիվ 38908/08, 14 փետրվար 2012թ.) Դատարանը մերժել է դիմումատուի զանգատը՝ համաձայն 35-րդ հոդվածի 1-ին կետի, 3-րդ կետի «բ» ենթակետի

³ Նույն տեղում, § 80:

⁴ Նույն տեղում, §§ 39 և 77-79:

⁵ Նույն տեղում, § 77:

⁶ Տե՛ս Բարձր մակարդակով համաժողովի կողմից ընդունված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ապագայի վերաբերյալ Գործողության ծրագիրը, Ինթերլակեն, 19 փետրվար 2010թ., § 9 (գ):

⁷ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ապագայի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Բարձր մակարդակով համաժողով, կայացվել է Իզմիրում, 26-27 ապրիլ 2011թ.:

և 4-րդ կետի:⁸

IV. «Էական վնաս»

7. Ընդունելիության նոր չափանիշի գլխավոր բաղադրիչը ամփոփված է այն հարցում, թե արդյո՞ք դիմումատուն կրել է «էական վնաս»: Վերևում մեջբերված *Shefer-ի* գործով Դատարանը նշել է, որ քանի դեռ ֆորմալ հիերարխիա գոյություն չունի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի երեք բաղադրիչների միջև, ուստի «էական վնասի» հարցը գտնվելու է նոր չափանիշի կենտրոնում: Այնուամենայնիվ, *Finger-ն ընդդեմ Բուլղարիայի* գործով (թիվ 37346/05, 10 մայիս 2011թ.) Դատարանը մերժել է գնահատել, թե արդյո՞ք դիմումատուն էական վնաս էր կրել, հաշվի առնելով վիճարկվող դատաքննության ժամկետների ոչ ողջամիտ լինելու հանգամանքը, քանի որ Դատարանը գտել էր, որ երկրորդ և երրորդ բաղադրիչների պահանջները չէին բավարարվել: Ավելին, *Flisar-ն ընդդեմ Սլովենիայի* գործով (թիվ 3127/09, 29 սեպտեմբեր 2011թ.) Կառավարության՝ նոր չափանիշի վրա հիմնված առարկությունը մերժվել է, քանի որ երկրորդ երաշխիքը չէր իրացվել՝ առանց էական վնասի բաղադրիչի գնահատման: Մակայն, այս մոտեցումը չի կարող որպես ընդհանուր դիտվել: Գործերի մեծ մասով հիերարխիկ մոտեցում է ընդունվում, երբ նոր չափանիշի ամեն մի բաղադրիչ առանձին կարգով է գնահատվում:

8. «Էական վնասը» հիմնված է այն գաղափարի վրա, որ իրավունքի խախտումը, թեև զուտ իրավական տեսանկյունից լինելով իրական, պետք է բավարարի խստության նվազագույն մակարդակը՝ երաշխավորելու միջազգային դատարանի կողմից քննությունը: Խախտումները, որոնք սուկ տեխնիկական են և ոչ էական, դուրս են ձևական շրջանակից և չեն արժանանում եվրոպական վերահսկողությանը (*Shefer-ի* գործը, վերևում մեջբերված): Նվազագույն այս շեմի գնահատությունը հարաբերական է և կախված գործի բոլոր հանգամանքներից: Խախտման ծանրությունը պետք է գնահատել, հաշվի առնելով ինչպես դիմումատուի սուբյեկտիվ ընկալումը, այնպես էլ՝ թե տվյալ գործով օբյեկտիվորեն ի՞նչ է վտանգված (*Korolev-ի* գործը, վերևում մեջբերված): Այնուամենայնիվ, դիմումատուի սուբյեկտիվ ընկալումը չի կարող բավարար լինել եզրակացնելու, որ դիմումատուն կրել է էական վնաս: Սուբյեկտիվ ընկալումը պետք է հիմնված լինի օբյեկտիվ հիմքերի վրա (*Ladygin-ն ընդդեմ Ռուսաստանի* (որոշ.) թիվ 35365/05, 30 օգոստոս 2011թ.): Կոնվենցիայի խախտումը կարող է վերաբերել սկզբունքային կարևորություն ունեցող հարցերին, և հետևաբար՝ անկախ գույքային շահերի առկայությունից էական վնաս առաջացնել (*Korolev-ի* գործը, վերևում մեջբերված): *Giuran-ն ընդդեմ Ռումինիայի* գործով (թիվ 24360/04, 21 հունիս 2011թ.) Դատարանը գտել է, որ դիմումատուն կրել է էական վնաս, քանի որ վեճի առարկա դատաքննությունը վերաբերում էր նրա համար սկզբունքային մի հարցին, այն է՝ իր գույքն ու տունը հարգելու իրավունքին: Եվ դա չնայած այն հանգամանքին, որ վեճի առարկա ներպետական վարույթներն ուղղված էին դիմումատուի սեփական բնակարանից 350 եվրո արժողությամբ գողացված ապրանքների ետ ստանալուն: Ապա նախադեպային իրավունքի զարգացումը պետք է օգնի պարզելու ճշգրիտ փոխազդեցությունը, մի կողմից՝ «օբյեկտիվ հիմքերով արդարացված սուբյեկտիվ ընկալման» և մյուս կողմից՝ «անձին վերաբերող սկզբունքային հարցի» միջև:

9. Ավելին, գնահատելու համար, թե որքանով է դիմումատուի համար սուբյեկտիվորեն կարևոր քննվող հարցը, Դատարանը կարող է հաշվի առնել դիմումատուի վարքագիծը, օրինակ՝ դատական քննության որոշ ժամանակի ընթացքում ակտիվ չլինելը, որը տվյալ պարագայում վկայում է այն մասին, որ դատավարությունը նշանակալի դեր չի ունեցել նրա համար (*Shefer-ի* գործը, վերևում մեջբերված): *Giusti-ն ընդդեմ Իտալիայի* գործով ((որոշ.),

⁸ Հարկ է նաև նշել, որ այս գործով Դատարանը մանրակրկիտ քննության չարժանացրեց առաջին և երկրորդ երաշխիքները, որը սովորաբար անում է:

թիվ 13175/03, 18 հոկտեմբեր 2011թ.) Դատարանը ներկայացրել է որոշակի նոր պայմաններ, որոնք անհրաժեշտ են հաշվի առնել լրջության նվազագույն շեմը որոշելիս՝ արդարացնելու համար միջազգային դատարանի կողմից քննություն կատարելը, այն է՝ ենթադրաբար խախտված իրավունքի էությունը, վիճարկվող խախտման լրջությունը և/կամ խախտման հնարավոր հետևանքները դիմումատուի անձնական կարգավիճակի վրա: Այս հետևանքները գնահատելիս, Դատարանը, մասնավորապես, ուսումնասիրելու է, թե ի՞նչ է վտանգված կամ որո՞նք են ներպետական դատավարության արդյունքները:

(Ա) ԷԱԿԱՆ ՏԻՆԱՆՄԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

10. Դատարանի վարությունը գտնվող մի շարք գործերով խստապահանջության աստիճանը գնահատվել է դիմումատուի համար խնդրո առարկա հարցի ֆինանսական հետևանքների և կարևորության տեսանկյունից: Նման ֆինանսական հետևանքները չեն գնահատվում միայն դիմումատուի կողմից ներկայացված ոչ նյութական վնասի պահանջի լույսի ներքո: *Kiousi-ն ընդդեմ Հունաստանի* գործով ((որոշ.), թիվ 52036/09, 20 սեպտեմբեր 2011թ.) Դատարանը վճռել է, որ ոչ նյութական վնասի մասով պահանջը, այն է՝ 1,000 եվրոն, բավարար չէր գնահատելու, թե որքանով էր կարևոր այդ հարցը դիմումատուի համար: Պատճառը կայանում էր նրանում, որ ոչ նյութական վնասը հաճախ հաշվարկվում է դիմումատուների՝ դատավարության նշանակության վերաբերյալ իրենց իսկ սուբյեկտիվ պատկերացումների հիման վրա:

11. Այն դեպքերում, երբ խոսքը գնում է ֆինանսական չնչին կորուստների մասին, ապա մինչ այժմ Դատարանը կիրառել է «էական վնաս» չափանիշը միայն հետևյալ գործերով, որտեղ խնդրո առարկա գումարը հավասար կամ պակաս էր 500 եվրոյից.

- մի գործով, որով վեճի առարկա գումարը հավասար էր 90 եվրոյի (*Adrian Mihai Ionescu-ի* գործը, վերևում մեջբերված),
- մի գործով, որով իշխանությունները դիմումատուին չէին վճարել մեկ եվրոյից էլ պակաս գումար (*Korolev-ի* գործը, վերևում մեջբերված),
- մի գործով, որով իշխանությունները դիմումատուին չէին վճարել շուրջ 12 եվրոյին հավասար գումար (*Vasilchenko-ն ընդդեմ Ռուսաստանի*, թիվ 34784/02, § 49, 23 սեպտեմբեր 2010թ.),
- մի գործով, որը վերաբերում էր 150 եվրո գումարի չափով ճանապարհային տուգանքին և վարորդական վկայականին մեկ տուգանային միավոր ավելացնելու որոշմանը (*Rinck-ի* գործը, վերևում մեջբերված),
- 25 եվրո գումարի չափով ուշացված վճարումը (*Gaftoniuc-ի* գործը, վերևում մեջբերված),
- 125 եվրո գումար չփոխհատուցելը (*Ștefănescu-ն ընդդեմ Ռումինիայի* (որոշ.), թիվ 11774/04, 12 ապրիլ 2011թ.),
- իշխանությունների կողմից դիմումատուին 12 եվրո չվճարելը (*Fedotov-ն ընդդեմ Ռումինիայի* (որոշ.), թիվ 51838/07, 24 մայիս 2011թ.),
- իշխանությունների կողմից դիմումատուին 107 եվրո չվճարելը՝ դրան գումարած 121 եվրո որպես ծախսեր ու ծախսեր, ընդհանուր՝ 228 եվրո (*Burov-ն ընդդեմ Մոլդովայի* (որոշ.), թիվ 38875/08, 14 հունիս 2011թ.),
- մի գործով, որը վերաբերում էր 135 եվրոյի տուգանքին, 22 եվրոյի ծախսերին և դիմումատուի վարորդական վկայականին մեկ տուգանային միավոր ավելացնելուն (*Fernandez-ն ընդդեմ Ֆրանսիայի* (որոշ.), թիվ 65421/10, 17 հունվար 2012թ.),
- մի գործով, որով Դատարանը նշել է, որ նյութական վնասի չափը հավասար էր 504 եվրոյին (*Kiousi-ի* գործը, վերևում մեջբերված),
- մի գործով, որով դիմումատուն 99 եվրոյի նախնական պահանջ էր ներկայացրել ընդդեմ իր փաստաբանի՝ ի լրումն այն հանգամանքի, որ նա ստացել էր 1,515 եվրոյի չափով փոխհատուցում՝ գործն ըստ էության քննելու երկարատևության համար (*Havelka-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշ.), թիվ 7332/10, 20 սեպտեմբեր 2011թ.),

- մի գործով, որով աշխատավարձի գծով պարտքը կազմում էր 102,882 ՀՀ դրամ⁹ (*Guruyan-ն ընդդեմ Հայաստանի* (որոշ.), թիվ 11456/05, 24 հունվար 2012թ.),
- մի գործով, որը վերաբերում էր 227 եվրոյի ծախսերին (*Šumbera-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության* (որոշ.), թիվ 48228/08, 21 փետրվար 2012թ.),
- մի գործով, որը վերաբերում էր 34 եվրոյի գումարի բռնագանձման մասին վճռի հարկադիր կատարմանը (*Shefer-ի* գործը, վերևում մեջբերված):

12. Վերը հիշատակված *Havelka-ի* գործով Դատարանը հաշվի է առել այն հանգամանքը, որ չնայած 1,515 եվրոյի փոխհատուցումը՝ ըստ Դատարանի նախադեպային իրավունքի անկեղծորեն չէր կարող համարվել որպես պատշաճ և բավարար փոխհատուցում, այդ գումարը չէր տարբերվում համապատասխան արդարացի փոխհատուցումից այնքանով, որ ի գործու լինել էական վնաս հասցնել դիմումատուին:

13. Ի վերջո, Դատարանը գիտակցում է, որ կրած նյութական կորուստի հետևանքները վերացական կարգով չպետք է գնահատվեն. նույնիսկ չնչին նյութական վնասը կարող է կարևոր նշանակություն ունենալ՝ հաշվի առնելով անձի դրույթունը, ինչպես նաև այն երկրի կամ տարածաշրջանի տնտեսական իրավիճակը, որում դիմումատուն ապրում է: Ուստի, Դատարանը գնահատում է ֆինանսական կորուստների հետևանքները՝ հաշվի առնելով անձի դրույթունը: Վերը հիշատակված *Fernandez-ի* գործով այն փաստը, որ դիմումատուն Մարսելի Վերաքննիչ վարչական դատարանի դատավոր էր, կարևոր էր դատարանի այն եզրահանգման համար, որ 135 եվրոյի տուգանքը նրա համար էական գումար չէր հանդիսանում:

14. Հակառակ դրան, երբ Դատարանը որոշում է, որ դիմումատուն էական ֆինանսական վնասներ է կրել, նոր չափանիշը կարող է հաշվի չառնվել: Այդ իրավիճակին կարող ենք ականատես լինել հետևյալ գործերով.

- մի գործով, որով «Pinto» վճիռների կատարումը ձգձգվել էր 9-ից մինչև 49 ամիս և վեճի առարկա գումարներն էլ տատանվել 200-ից մինչև 13,749.99 եվրո (*Gaglione-ն և այլք* գործը, վերևում մեջբերված),
- մի գործով, որը վերաբերում էր սեփականազրկված գույքի փոխհատուցման վճարների ուշացումներին, որով խոսքը գնում էր տասնյակ հազար եվրոներին (*Sancho Cruz-ն և 14 մյուս «Agrarian Reform» գործերն ընդդեմ Պորտուգալիայի*, թիվթիվ 8851/07 և մյուս գործերը, §§ 32-35, 18 հունվար 2011թ.),
- մի գործով, որով վիճարկվող աշխատանքային իրավունքների պահանջը հասնում էր շուրջ 1,800 եվրոյի (*Živić-ն ընդդեմ Սերբիայի*, թիվ 37204/08, 13 սեպտեմբեր 2011թ.),
- մի գործով, որը վերաբերում էր 15 տարի և 5 ամիս տևած քաղաքացիական գործով դատավարությանը և «նշանակալից գումարի» պահանջի վերաբերյալ որևէ «Pinto» արդյունավետ պաշտպանության միջոցի բացակայությանը (*Giusti-ի* գործը, վերևում մեջբերված),
- մի գործով, որը վերաբերում էր քաղաքացիական գործով դատավարության երկարատևությանը, որով վեճի առարկա գումարը հաշմանդամության չնչին նպաստներին էր վերաբերում (*De Ieso-ն ընդդեմ Իտալիայի*, թիվ 34383/02, 24 ապրիլ 2012թ.):

(Բ) ԷՍԿԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ

15. Բացի այդ, Դատարանը չի քննում միայն չնչին ֆինանսական գումարների գործերը: Ազգային մակարդակով գործի փաստացի հանգուցալուծումը կարող է ֆինանսականից բացի այլ հետևանքներ ունենալ: Վերը հիշատակված *Holub-ի*, *Bratři Zátkové, a.s., ընդդեմ Չեխիայի Հանրապետության* ((որոշ.), թիվ 20862/06, 8 փետրվար 2011թ.), *Matoušek-ն*

⁹ Եվրոյին համարժեք գումարը չէր նշվել որոշման մեջ, սակայն հիշատակված գումարը հավասար է շուրջ 200 եվրոյին:

ընդդեմ Չեխիայի Հանրապետության ((որոշ.), թիվ 9965/08, 29 մարտ 2011թ.), *Čavajda-ն* ընդդեմ Չեխիայի Հանրապետության ((որոշ.), թիվ 17696/07, 29 մարտ 2011թ.) և *Jirsák-ն* ընդդեմ Չեխիայի Հանրապետության ((որոշ.), թիվ 8968/08, 5 ապրիլ 2012թ.) գործերով Դատարանը հիմնավորել է իր որոշումները նրանով, որ մյուս կողմերի հայտնի չդարձած դիտարկումներն որևէ նոր կամ գործին վերաբերելի հանգամանք չէին ներկայացնում և որ Սահմանադրական դատարանի որոշումը, ամեն պարագայում, հիմնված չէր դրանց վրա: *Jančev-ն* ընդդեմ «Նախկին Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետության գործով ((որոշ.), թիվ 18716/09, 4 հոկտեմբեր 2011թ.) նույնպես գանգատը վերաբերում էր առաջին աստիճանի դատարանի որոշման ոչ հրապարակային լինելուն: Դատարանը որոշել է, որ դիմումատուն չի կրել էական որևէ վնաս, քանի որ նա տուժող կողմ չէր: Դատարանը նաև հաշվի է առել, որ պատը քանդելու պարտավորությունը, ինչն արդյունք էր դիմումատուի անօրինական վարքագծի, ֆինանսական ծանր կացության մեջ չի գցում դիմումատուին: Մեկ այլ՝ *Savu-ն* ընդդեմ Ռումինիայի գործով ((որոշ.), թիվ 29218/05, 11 հոկտեմբեր 2011թ.) դիմումատուն գումարի որևէ պահանջ ուղղակիորեն չէր ներկայացրել: Այդ գործով դիմումատուն բողոքում էր իր օգտին կայացված մի շարք վճիռների չկատարման մասին, այդ թվում՝ վկայական տրամադրելու պարտավորության մասով: *Gagliano Giorgi-ն* ընդդեմ *Բուլղարիայի* գործով (թիվ 23563/07, 6 մարտ 2012թ.) Դատարանը առաջին անգամ քննեց քրեական դատավարության երկարատևության վերաբերյալ ներկայացված բողոքը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուի պատիժը նվազել էր դատավարության երկարատևության հետևանքով, Դատարանը վճռել է, որ պատժի նման կրճատումը կարող էր փոխհատուցել կամ նվազեցնել դիմումատուի բոլոր այն վնասները, որոնք կարող էին առաջ գալ դատավարության երկարատևության պատճառով: Հետևաբար, Դատարանը գտել է, որ դիմումատուն չի կրել էական որևէ վնաս: *Liga Portuguesa de Futebol Profissional-ն* ընդդեմ *Պորտուգալիայի* գործով ((որոշ.), թիվ 49639/09, 3 ապրիլ 2012թ.) Դատարանը հետևել էր վերը հիշատակված *Holub-ի* գործով սահմանված պատճառաբանությանը: Խնդրո առարկա խախտումը վերաբերում էր այն հանգամանքին, որ դատախազության որոշումը չէր ծանուցվել դիմումատուին, և ոչ թե 19 միլիոն եվրոյի գումարին, որն ընկերությունը ստիպված էր եղել վճարել: Ի վերջո, Դատարանը գտել է, որ դիմումատու ընկերությունը չէր տուժել խնդրո առարկա որոշման ծանուցված չլինելու պատճառով:

16. Անդրադառնալով այն գործերին, որով Դատարանը չի կիրառել նոր չափանիշը, ինչպես օրինակ՝ *3A.CZ s.r.o.-ն* ընդդեմ *Չեխիայի Հանրապետության* գործը (թիվ 21835/06, 10 փետրվար 2011թ.), որով Դատարանը գտել է, որ ծանուցված չեղած դիտարկումները կարող էին նոր տեղեկատվություն պարունակել, որի մասին դիմումատու ընկերությունը տեղյակ չէր: Սույն գործը առանձնացնելով *Holub-ի* գործերի շարքից՝ Դատարանը չէր կարող վճռել, թե արդյո՞ք ընկերությունը կրել է էական վնաս, թե՛ ոչ: Նույնաբովանդակ պատճառաբանություն էր օգտագործվել *BENet Praha, spol. s r.o.-ն* ընդդեմ *Չեխիայի Հանրապետության* գործով (թիվ 33908/04, 24 փետրվար 2011թ.):

17. *Luchaninova-ն* ընդդեմ *Ուկրաինայի* գործով (թիվ 16347/02, 9 հունիս 2011թ.) Դատարանը նկատել է, որ դատավարության ելքը, որն ըստ դիմումատուի պնդման՝ անօրինական էր, իսկ գործի քննությունն էլ՝ անարդար, որոշակի բացասական հետևանք էր ունեցել նրա մասնագիտական կյանքում: Մասնավորապես, դիմումատուի դատապարտումը հիմք էր ընդունվել նրան աշխատանքից ազատելու համար: Հետևաբար, դիմումատուն կրել է էական վնաս:

18. *Van Velden-ն* ընդդեմ *Նիդեռլանդների* գործով (թիվ 30666/08, 19 հուլիս 2011թ.) դիմումատուն բողոքում էր Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն: Կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի կրել էական վնաս, քանի որ նախնական կալանքի ամբողջ ժամանակահատվածը հանվել էր նրա ազատագրկման դատավճռից: Այնուամենայնիվ, Դատարանը գտել է, որ բազմաթիվ պայմանավորվող կողմերի քրեական դատավարության առաձևահատկություններից է հաստատել կալանքի ժամկետները մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը և նվազեցնել վերջնական պատժաչափը, որպեսզի Դատարանը վճռի, որ նախնական կալանքի արդյունքում ցանկացած վնաս *ipso facto*

Էական չէր Կոնվենցիայի նպատակների իմաստով, ինչը թույլ կտար նվազեցնել 5-րդ հոդվածի համաձայն ներկայացվող հնարավոր գանգատների մեծ բաժինը Դատարանի վերահսկողությունից: Ուստի, Կառավարության՝ նոր չափանիշի համաձայն փաստարկը մերժվել է:

19. Վերը հիշատակված *Živić-ի* գործով Դատարանը գտել է, որ դիմումատուի կրած ֆինանսական վնասը, նաև այն ինչ վտանգի տակ էր, այսինքն՝ Բելգրադի տարածքային դատարանի անկայուն նախադեպային իրավունքը հավասար վարձատրություն հավասար աշխատանքի դիմաց և արդար աշխատավարձի իրավունքի վերաբերյալ, բավարար էր Դատարանի համար՝ նոր չափանիշի համաձայն Կառավարության փաստարկը մերժելու համար:

V. Արդյո՞ք մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում է գործի ըստ էության քննություն

20. Նոր չափանիշի երկրորդ բաղադրիչը պաշտպանության այն երաշխիքներից է¹⁰, որը պարտադրում է Դատարանին շարունակել գանգատի քննությունը նույնիսկ դիմումատուի կողմից էական վնաս կրելու բացակայության պարագայում, եթե դա է պահանջում սույն Կոնվենցիայով կամ նրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների հարգումը: Այդ ձևակերպումը համապատասխանում է Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 1-ին մասի ձևակերպմանը, որտեղ այն կատարում է նույն գործառույթը՝ միայն գանգատը գործերի ցուցակից հանելու Դատարանի որոշումների համատեքստում: Այն նույնպես օգտագործվում է 39-րդ հոդվածի 1-ին մասում (նախկին՝ 38-րդ հոդված) կողմերի միջև բարեկամական կարգավորումն ապահովելու նպատակով: Դատարանի և Հանձնաժողովի կողմից այդ դրույթների շարունակ մեկնաբանությունը ենթադրում է, որ վերջիններս պետք է շարունակեն գործի քննությունը, երբ դա անհրաժեշտ է, քանի որ գործը կարող է ընդհանուր բնույթի հարցեր բարձրացնել՝ ներգործելով Կոնվենցիայի պահպանման վրա:

21. Այդպիսի հարցեր առաջ կգային, օրինակ, երբ կարիք լիներ դրդելու պատասխանող պետությանը լուծել կառուցվածքային այն խնդիրները, որոնք առնչվում են դիմումատուի կարգավիճակում գտնվող այլ անձանց հետ (*Korolev-ի* գործը, վերևում մեջբերված): Նույն այդ մտտեցումը օգտագործվել էր վերը հիշատակված *Finger-ի* գործով, որով Դատարանն անհրաժեշտ չհամարեց որոշել, թե արդյո՞ք դիմումատուն կրել էր էական վնաս, քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում էր գործի ըստ էության քննություն (քաղաքացիական դատավարության անհարկի երկարատևության հետ կապված հավանական համակարգային խնդրի և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայության վերաբերյալ):

22. Վերը հիշատակված *Živić-ի* գործով Դատարանը նաև վճռել է, որ եթե նույնիսկ ենթադրենք, որ դիմումատուն չէր կրել էական վնաս, գործը բարձրացրել է ընդհանուր կարևորության հարցեր, որոնք պահանջում են քննություն: Սույն գործը ցույց է տալիս, որ հաճախ հնարավոր չէ տարբերակել էական վնասի ներքո «սկզբունքային կարևոր խնդիր» չափորոշիչը (Դատարանն առաջին անգամ անդրադարձել է դրան *Korolev-ի* գործով, վերևում մեջբերված) մարդու իրավունքների պաշտպանության այն երաշխիքից, որը պահանջում է գործի ըստ էության քննություն:

23. Նմանապես, *Nicoleta Gheorghe-ն ընդդեմ Ռումինիայի* գործով (թիվ 23470/05, 3 ապրիլ 2012թ.) Դատարանը մերժել է կիրառել նոր չափանիշը, չնայաց որ վեճը վերաբերում էր չնչին ֆինանսական գումարին (17 եվրո), քանի որ ներպետական դատարանների համար անհրաժեշտ էր որոշում կայացնել խնդրի սկզբունքային կողմի վերաբերյալ (գործը վերաբերում էր անմեղության կանխավարկածի հարցին և քրեական դատավարության

¹⁰ Տե՛ս թիվ 14 Արձանագրության Բացատրական Ձեկույցը, § 81:

մասնակիցների իրավահավասարությանը և առաջին դատավճիռն էր ներպետական օրենսդրության փոփոխությունից հետո): *Juhas Duric-ն ընդդեմ Սերբիայի* գործով ((վերանայված), թիվ 48155/06, 10 ապրիլ 2012թ.) դիմումատուն բողոքում էր նախաքննության ընթացքում ռստիկանության կողմից նշանակված պաշտպանի հոնոարի վճարման վերաբերյալ: Դատարանը վճռել է, որ վիճարկվող խնդիրները չեն կարող լինել աննշան, կամ հետևաբար՝ այնպիսին, որ արժանի չլինեն ըստ էության քննության, քանի որ դրանք վերաբերում էին քրեական արադարադատության համակարգի գործունեությանը: Ուստի, Կառավարության փաստարկը, որը հիմնված էր ընդունելիության նոր չափանիշի վրա, մերժվել էր, քանի որ մարդու իրավունքների պաշտպանությունը պահանջում էր ըստ էության քննություն:

24. Ինչպես նշված է Բացատրական Ձեկույցի 39-րդ պարբերությունում, գանգատի ընդունելիության նոր պահանջը կոչված է ապահովելու այն գործերի մերժման չեղյալ համարումը, որոնք չնայած իրենց աննշան բնույթի, լուրջ հարցեր են առաջ քաշում՝ ազդելով Կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանության վրա կամ կարևոր հարցեր բարձրացնում ներպետական օրենսդրության վերաբերյալ:

25. Դատարանը արդեն վճռել է, որ հարգանքը մարդու իրավունքների հանդեպ չի պահանջում, որ գանգատի քննությունը շարունակվի, երբ, օրինակ, գործին վերաբերող օրենքը փոփոխության է ենթարկվել, և նույնանման հարցերն էլ լուծվել Դատարանի վարույթում գտնվող այլ գործերով (*Léger-ն ընդդեմ Ֆրանսիայի* (ցուցակից հանված) [ՄՊ], թիվ 19324/02, § 51, 30 մարտ 2009թ., *Rinck-ի* և *Fedotov-ի* գործերը, երկուսն էլ վերևում մեջբերված): Բացի այդ, նաև չէր վիճարկվել համապատասխան օրենսդրությունը, և Դատարան ներկայացված գանգատը հետապնդում էր սուսկ պատմական շահ (*Adrian Mihai Ionescu-ի* գործը, վերևում մեջբերված): Նմանապես, հարգանքը մարդու իրավունքների հանդեպ չի պահանջում, որ Դատարանը քննության առնի այն գանգատը, որով Դատարանը և Նախարարների կոմիտեն գտել են համակարգային խնդիր, ինչպես օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության (*Vasilchenko-ի* գործը, վերևում մեջբերված) կամ Ռումինիայի (*Gaftoniuc-ի* և *Savu-ի* գործերը, երկուսն էլ վերևում մեջբերված) և, անշուշտ, Սոլդովայի Հանրապետության (*Burov-ի* գործը, վերևում մեջբերված) կամ Հայաստանի (*Gururyan-ն ընդդեմ Հայաստանի* (որոշ.), թիվ 11456/05, 24 հունվար 2012թ.) կողմից ներպետական վճիռների չկատարումը: Բացի այդ, երբ հարցը վերաբերում է Հունաստանում (*Kiousi-ի* գործը, վերևում մեջբերված) կամ Չեխիայի Հանրապետությունում (*Havelka-ի* գործը, վերևում մեջբերված) առկա դատավարության երկարատևության խնդրին, ապա Դատարանը բազմաթիվ առիթներ է ունեցել նախկինում կայացված վճիռներում անդրադառնալ այդ խնդրին: Դա հավասապես կիրառելի է նաև դոնբաս նիստում վճիռների հրապարակելու (*Jančev-ի* գործը, վերևում մեջբերված) կամ մյուս կողմի ներկայացրած դիտարկումների կամ ապացույցների առթիվ դիտողություններ անելու կամ տեղեկացված լինելու խնդրին (*Bazelyuk-ն ընդդեմ Ուկրաինայի* (որոշ.), թիվ 49275/08, 27 մարտ 2012թ.):

VI. Արդյո՞ք գործը պատշաճ կերպով քննվել է ներպետական դատական աստիճանների կողմից

26. Վերջապես, 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետը չի թույլատրում մերժել գանգատը ընդունելիության նոր չափանաչի համաձայն, եթե այն պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատական աստիճանների կողմից: Բնութագրվելով նախագծողների կողմից որպես «երկրորդ երաշխիքային դրույթ»¹¹՝ այդ կանոնի նպատակն է երաշխավորել, որ յուրաքանչյուր գործ պետք է դատական քննության ենթարկվի կամ ազգային, կամ

¹¹ Նույն տեղում, § 82:

Եվրոպական մակարդակում:

27. Հետևաբար, երկրորդ երաշխիքային դրույթի նպատակն է խուսափել դիմումատուի համար արդարադատության մերժումից (*Korolev-ի*, *Gaftoniuc-ի* և *Fedotov-ի* գործերը, բոլորը վերևում մեջբերված): Մրցակցային դատավարության ընթացքում դիմումատուն պետք է հնարավորություն ունենա ներկայացնելու իր փաստարկներն առնվազն ներպետական դատական մեկ ատյանում (*Adrian Mihai Ionescu-ի* գործը, վերևում մեջբերված և *Ștefănescu-ի* գործը, վերևում մեջբերված):

28. Երկրորդ երաշխիքային դրույթը նաև համահունչ է սուբսիդիարության սկզբունքի հետ, ինչպես երևում է հատկապես Կոնվենցիայի 13-րդ հոդվածում, որը պահանջում է, որ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցները հասանելի լինեն ներպետական մակարդակում: Դատարանը գտել է, որ «գործ» բառը (35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետում թարգմանվել է որպես «գանգատ») չպետք է նույնականացնել «գանգատ» բառի, այն է՝ Ստրասբուրգի դատարան ներկայացված բողոքի հետ: Հակառակ դեպքում, անհնար կլիներ անընդունելի ճանաչել այն գանգատը, որը վերաբերում էր ենթադրյալ այն խախտումներին, որոնք առաջ են եկել ներպետական դատական վերջին ատյանի կողմից գործի քննության արդյունքում, քանի որ վերջինիս դատական ակտերը, ըստ սահմանման, ենթակա չեն ներպետական մակարդակում հետագա քննության (*Holub-ի* գործը, վերևում մեջբերված): Հետևաբար, «գանգատ» բառն ընկալվում է որպես դիմումատուի կողմից ներպետական դատարաններին հասցեագրված գործողություն, բողոք կամ պահանջ:

29. *Dudek-ն ընդդեմ Գերմանիայի* գործով ((որոշ.), թիվթիվ 12977/09 և մյուս գործերը, 23 նոյեմբեր 2010թ.) քաղաքացիական դատավարության չափազանց երկար տևողության վերաբերյալ բողոքը՝ Գերմանիայի օրենսդրության համաձայն պատշաճ կերպով չէր քննվել ներպետական դատական ատյանների կողմից, քանի որ դեռևս ընդունված չէր իրավական պաշտպանության արդյունավետ որևէ միջոց: Ուստի, նոր չափանիշը չէր կարող կիրառվել այդ գործով: Վերը հիշատակված *Finger-ի* գործով Դատարանը գտել է, որ այդ գործով բարձրացած գլխավոր հարցը կայանում էր ճիշտ նրանում, թե արդյո՞ք վիճարկվող դատավարության երկարատևության անհիմն լինելու վերաբերյալ դիմումատուի բողոքը կարող էր պատշաճ կերպով քննվել ներպետական մակարդակում: Հետևաբար, գործը չէր կարող գնահատվել որպես երկրորդ երաշխիքային դրույթի պահանջների կատարում: Նույն այս մտտեցումն որդեգրվել է վերևում մեջբերված *Flisar-ի* գործով: Դատարանը գտել է, որ դիմումատուն բողոքում էր, որ իր գործը պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատարանների կողմից: Դատարանը նաև նշել է, որ Սահմանադրական դատարանը չի քննել դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի երաշխիքների ենթադրյալ խախտման վերաբերյալ բողոքները: Հետևաբար, Դատարանը մերժել է Կառավարության կողմից ներկայացված նոր չափանիշի առարկությունը: *Fomin-ն ընդդեմ Սոլդովայի* գործով (թիվ 36755/06, 11 հոկտեմբեր 2011թ.) դիմումատուն բողոքում էր 6-րդ հոդվածի հիման վրա, որ դատարանները բավարար պատճառներ չէին ներկայացրել հիմնավորելու համար իրենց որոշումները, որով վերջինս մեղադրվում էր վարչական զանցանք կատարելու մեջ: Սույն գործով Դատարանը անդրադարձավ այն հարցին, թե արդյո՞ք դիմումատուի բողոքը պատշաճ կերպով ըստ էության քննվել էր ներպետական դատարանների կողմից, ի վերջո մերժելով կիրառել նոր չափանիշը և նաև ճանաչելով 6-րդ հոդվածի խախտում: Սակայն, բացառությամբ այս չորս գործերի, երկրորդ երաշխիքային դրույթը գլխավոր խոչընդոտը չէր նոր չափանիշը կիրառելու հարցում:

30. Ինչ վերաբերում է «պատշաճ» բառի մեկնաբանությանը, ապա նոր չափանիշը չպետք է բացարձակ կերպով մեկնաբանել, ինչպես որ 6-րդ հոդվածի արդար դատաքննության պահանջների դեպքում (*Adrian Mihai Ionescu-ն* և *Liga Portuguesa de Futebol Profissional-ի* գործերը, երկուսն էլ վերևում մեջբերված): Չնայած նրան, և ինչպես որ պարզաբանվել է վերը հիշատակված *Sumbera-ի* գործով, արդար դատաքննության որոշակի թերացումները՝ հաշվի առնելով դրանց բնույթը և ուժգնությունը, կարող են ներագդել գործի «պատշաճ» քննության վրա (ուստի Դատարանը գտել է, որ նոր չափանիշը կիրառելի չէ *Fomin-ի* գործով, վերևում մեջբերված):

31. Բացի այդ, «պատշաճ կերպով չի քննվել» հասկացությունը պետությունից չի պահանջում, որ բոլոր բողոքները ըստ էության քննվեն ներպետական դատարաններում, որքան էլ դրանք մակերեսային կարող են լինել: Վերը հիշատակված *Ladygin-ի* գործով Դատարանը վճռել է, որ երբ դիմումատուն փորձում է այնպիսի պահանջ ներկայացնել, որն ակիայտորեն որևէ հիմք չունի ներպետական օրենսդրությունում, 35-րդ հոդվածի 3-րդ կետի «բ» ենթակետի համաձայն վերջին չափանիշն, այնուամենայնիվ, կատարված է լինում:

VII. Եզրափակիչ դիտողություններ

32. Թիվ 14 Արձանագրության 20-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված լինելով՝ ավելի քան երկու տարիների ընթացքում Դատարանի Բաժանմունքները կիրառել են ընդունելիության նոր չափանիշը 26 գանգատներով, որոնք վերաբերում էին Կոնվենցիայի 6-րդ և 13-րդ հոդվածների, ինչպես նաև թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ենթադրյալ խախտումներին, սակայն գործերից մեծ մասն ընկնում էր 6-րդ հոդվածի շրջանակի ներքո: Նմանապես, նոր չափանիշը քննվել, սակայն մերժվել է այն գործերով, որոնք բարձրացրել են նույն հոդվածների շրջանակի ներքո ընկնող բողոքներ (բացառությամբ *Van Velden-ի* գործով, վերևում մեջբերված): Նոր չափանիշը քննվել, սակայն Դատարանի կողմից մերժվել է հետագա 16 գործերով: Գործերի երկու ցանկերը կցված են սույն զեկույցին: 2012թ. հունիսի 1-ից սկսած, երբ չափանիշը կարող է կիրառվել միանձնյա դատավորի կողմից, նրա շարունակական ազդեցությունը կարող է գնահատվել համապատասխան վիճակագրության հիման վրա:

Հավելված Ա
ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ
ՈՐՈՎ ԿԻՐԱՌՎԵԼ Է ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇԸ

Գանգատ	Բաժանմունք	Որոշման / վճռի ամսաթիվ	Առարկան և Դատարանի հետևությունները
36659/04 <i>Ionescu-ն ընդդեմ Ռումինիայի</i>	III	01/06/2010	Դատարանի մատչելիությունը (Հոդված 6) – §§ 27-41 [Հոդված 35 § 3 (p) համաձայն քննված 1-ին գործը]
25551/05 <i>Korolev-ն ընդդեմ Ռուսաստանի</i>	I	01/07/2010	Դատարանի վճռի չկատարումը (Կոնվենցիայի Հոդված 6 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1)
34784/02 <i>Vasilchenko-ն ընդդեմ Ռուսաստանի</i>	I	23/09/2010	Դատարանի վճռի ուշացված կատարումը (Հոդված 6 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 48-50
18774/09 <i>Rinck-ն ընդդեմ Ֆրանսիայի</i>	V	19/10/2010	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (Հոդված 6 § 1)
24880/05 <i>Holub-ն ընդդեմ Չեխիայի</i>	V	14/12/2010	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (մյուս կողմերի դիտարկումներին ծանուցված չլինելը – Հոդված 6 § 1)
20862/06 <i>Bratfi zátkové-ն ընդդեմ Չեխիայի</i>	V	08/02/2011	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (մյուս կողմերի դիտարկումներին ծանուցված չլինելը – Հոդված 6 § 1)
30934/05 <i>Gaftoniuc-ն ընդդեմ Ռումինիայի</i>	III	22/02/2011	Պետական տուրքի տարածակետ վճարումը (Հոդված 6 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 27-40
9965/08 <i>Matoušek-ն ընդդեմ Չեխիայի</i>	V	29/03/2011	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (մյուս կողմերի դիտարկումներին ծանուցված չլինելը – Հոդված 6 § 1)
17696/07 <i>Čavajda-ն ընդդեմ Չեխիայի</i>	V	29/03/2011	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (մյուս կողմերի դիտարկումներին ծանուցված չլինելը – Հոդված 6 § 1)
11774/04 <i>Štefănescu-ն ընդդեմ Ռումինիայի</i>	III	12/04/2011	Փոխհատուցման վարույթի արդարությունը (Հոդվածներ 6 և 13) – §§ 34-47
51838/07 <i>Fedotov-ն ընդդեմ Մոլդովայի</i>	III	24/05/2011	Դատարանի վճռի չկատարումը (Հոդված 6 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1)
38875/03 <i>Burov-ն ընդդեմ Մոլդովայի</i>	III	14/06/2011	Դատարանի վճռի չկատարումը (թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 22-38
35365/05 <i>Ladygin-ն ընդդեմ Ռուսաստանի</i>	I	30/08/2011	Ներպետական դատարանների մերժումը ըստ էության քննել դիմումատուի հայցն ընդդեմ հսկիչի (Հոդված 6) [Հոդված 35 § 3 (b) ներառված երրորդ բաղադրիչի վերաբերյալ պարզաբանումը]
52036/09 <i>Kiousi-ն ընդդեմ Հունաստանի</i>	I	20/09/2011	Դատավարության երկարատևությունը (Հոդված 6 § 1)
7332/10 <i>Havelka (II) ընդդեմ Չեխիայի</i>	V	20/09/2011	Դատավարության երկարատևությունը (Հոդված 6 § 1)
18716/09 <i>Jancev-ն ընդդեմ Նախկին</i>	I	04/10/2011	Վճռի հրապարակային չլինելը (Հոդված 6 § 1)
Հարավսլավական Մակեդոնիայի Հանրապետության			
29218/05 <i>Savu-ն ընդդեմ Ռումինիայի</i>	III	11/10/2011	Դատարանի վճռի չկատարումը (Հոդվածներ 6 և 13, և թիվ 1 Արձանագրության Հոդված 1)
65421/10 <i>Fernandez-ն ընդդեմ Ֆրանսիայի</i>	V	17/01/2012	Դատարանի մատչելիությունը (Հոդված 6)
11456/05 <i>Gururyan-ն ընդդեմ Հայաստանի</i>	III	24/01/2012	Երեք վերջնական վճիռների չկատարումը (Հոդված 6 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 59 -63
38908/08 <i>Munier-ն ընդդեմ Ֆրանսիայի</i>	V	14/02/2012	166 եվրո աշխատավարձի պարտքը, որը վճարվել է Դատարանի մատչելիությունը հաստատուն տոկոսադրույքով տուգանքների նկատմամբ (Հոդվածներ 6 § 1 և 13) – § 17

Գանգատ	Բաժանմունք	Որոշման / վճռի ամսաթիվ	Առարկան և Դատարանի հետևությունները
23563/07 <i>Gagliano Giorgi-ն ընդդեմ Իտալիայի</i>	II	14/02/2012	Քրեական դատավարության երկարատևությունը «Pinto» իրավական պաշտպանության միջոցի առումով (Հոդված 6 § 1) – § 54-66 [Առաջին անգամ նոր չափանիշը կիրառվել է քրեական դատավարության երկարատևության նկատմամբ]
48228/08 <i>Šumbera-ն ընդդեմ Չեխիայի</i> <i>Հանրապետության</i>	V	21/02/2012	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (Հոդված 6 § 1)
45175/04 <i>Shefer-ն ընդդեմ Ռուսաստանի</i>	I	13/03/2012	Մասնավոր անձի նկատմամբ 34 եվրո գումարի բռնագանձման մասին դատական վճռի չկատարումը. «Հաշվի առնելով նրա շարունակական անգործությունը, արդյո՞ք նա կարողացել էր ցույց տալ, որ կատարողական վարույթը աուբյեկտիվորեն կարևոր էր իր համար:» – § 27
49275/08 <i>Bazelyuk-ն ընդդեմ Ուկրաինայի</i>	V	27/03/2012	Հոդված 6 § 1 (Գերագույն դատարանը չէր տեղեկացրել դիմումատուին վճռաբեկ բողոքի մասին) Վերաբերում էր 445 եվրո ոչ նյութական վնասի փոխհատուցմանը Էլեկտրաէներգիան անջատելու համար
49639/09 <i>Liga Portuguesa de Futebol Profissional-ն ընդդեմ Պորտուգալիայի</i>	II	03/04/2012	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (Նախարարության կարծիքը ծանուցված չլինելը, որը չէր կարող ազդել գործի ելքի վրա) – (Հոդված 6) <i>Holub-ի</i> գործի շարքից – § 38
8968/08 <i>Jirsák-ն ընդդեմ Չեխիայի</i> <i>Հանրապետության</i>	V	12/04/2012	Սահմանադրական դատարանի կողմից քննվող մեկ բողոք, որը վերաբերում էր մրցակցային դատավարությանը (Հոդված 6) <i>Holub-ի</i> գործի շարքից – §§ 89-90

Հավելված Բ
ԳՈՐԾԵՐԻ ՑԱՆԿ
ՈՐՈՎ ՄԵՐԺՎԵԼ Է ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՉԱՓԱՆԻՇԸ

Գանգատ	Բաժանմունք	Որոշման / վճռի ամսաթիվ	Առարկան և Դատարանի հետևությունները
12977/09 և այլոք <i>Dudek (VIII) ընդդեմ Գերմանիայի</i>	V	23/11/2010	Քաղաքացիական դատավարության երկարատևությունը: Պահանջները պատշաճ կերպով չեն քննվել ներպետական դատարանի կողմից
45867/07 և մյուս գանգատները <i>Gaglione-ն և այլոք ընդդեմ Իտալիայի</i>	II	21/12/2010	Վճռի կատարման հետաձգումը (Կոնվենցիայի Հոդված 6 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 16-19
8851/07 և մյուս գանգատները <i>Sancho cruz և 14 մյուս գանգատներն ընդդեմ Պորտուգալիայի</i>	II	18/01/2011	Դիմումատուներին փոխհատուցման ենթակա գումարի վճարման ուշացումը (թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 29-35
21835/06 <i>3A.CZ.S.R.O.-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության</i>	V	10/02/2011	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (այլ կողմերի դիտարկումների ծանուցված չլինելը) (Հոդված 6 § 1) – § 34 [հայտնի <i>Holub -ի</i> գործը]
33908/04 և այլոք <i>Benet Praha, Spol.S.R.O.-ն ընդդեմ Չեխիայի Հանրապետության</i>	V	24/02/2011	Մրցակցային դատավարության մասնակիցների իրավահավասարությունը (այլ կողմերի դիտարկումների ծանուցված չլինելը) (Հոդված 6 § 1) – § 135 [հայտնի <i>Holub -ի</i> գործը]
37346/05 <i>Finger-ն ընդդեմ Բուլղարիայի</i>	IV	10/05/2011	Քաղաքացիական դատավարության երկարատևությունը և արդյունավետ իրավական պաշտպանության բացակայությունը (Հոդվածներ 6 and 13) – §§ 67-77 [Դատարանը չի գտել էական վնաս, քանի որ երաշխիքային դրույթները չեն բավարարվել]
48155/06 <i>Juhás Duric-ն ընդդեմ Սերբիայի</i>	II	07/06/2011	Դատարանի մատչելիությունը (Հոդված 6 § 1) – §§ 50-58
16347/02 <i>Luchaninova-ն ընդդեմ Ուկրաինայի</i>	V	09/06/2011	Դատաքննության արդարությունը և բողոք բերելու անհնարիությունը (Հոդված 6 §§ 1 և 3, և Հոդված 13) – §§ 46-50
24360/04 <i>Giuran-ն ընդդեմ Ռումինիայի</i>	III	21/06/2011	Դատավարության արդարությունը և սեփականության իրավունքը (վերջնական որոշման բեկանումը) (Հոդված 6 § 1 և թիվ 1 Արձանագրության Հոդված 1) – §§ 17-25 [Նոր դատողությունների ներկայացում. հուզական արժեք, սկզբունքային հարց]
30666/08 <i>Van Velden-ն ընդդեմ Նիդերլանդների</i>	III	19/07/2011	Դիմումատուի կալանքի տակ գտնվելու օրինականությունը (Հոդված 5 § 4) – §§ 33-39
37204/08 <i>Živić-ն ընդդեմ Սերբիայի</i>	II	13/09/2011	Դատավարության արդարությունը (ներպետական դատարանների նախադեպային իրավունքի անկայունությունը) (Հոդված 6 § 1) – §§ 36-42
3127/09 <i>Flisar-ն ընդդեմ Սլովենիայի</i>	V	29/09/2011	Վճռի հրապարակային չլինելը (Հոդված 6 § 1) – § 28
36755/06 <i>Fomin-ն ընդդեմ Սողոմոնյայի</i>	III	11/10/2011	Բավարար հիմնավորումների բացակայությունը (Հոդված 6 § 1) նոր չափանիշը քննվել է համատեղ ըստ էության հետ, արդար դատաքննության երաշխիքների խախտում, ուստի գործը «պատշաճ կերպով չի քննվել ներպետական դատարանների կողմից» – § 20
13175/03 <i>Giusti-ն ընդդեմ Իտալիայի</i>	II	18/10/2011	Դատավարության երկարատևությունը (Հոդված 6 § 1) – §§ 22-36 [Ներկայացնում է որոշակի հարցեր, որոնք պետք է հաշվի առնվեն որոշելու համար խնդրի լրջության այն նվազագույն շեմը՝ արդարացնելու միջազգային դատարանի կողմից գործի քննությունը (§ 34)]
23470/05 <i>Nicoleta Gheorghe-ն</i>	III	03/04/2012	Արդար դատաքննության բացակայությունը (Հոդված 6) – § 24

ընդդեմ Ռումինիայի
34383/02
De Ieso-ն ընդդեմ Իտալիայի

II

24/04/2012

[Հարգանքը մարդու իրավունքների հանդեպ պահանջում է այնպիսի վճռի կայացում, որին կհետևեն ազգային իշխանությունները] Բաղադրացիական դատավարության երկարատևությունը (Հոդված 6 § 1) – § 36
Խնդրո առարկա գումարը վերաբերում էր հաշմանդամության նպաստներին, որոնք չնչին էին